2005, ՀՈՒՆՎԱՐ Բ, ԹԻՎ 2 (190)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հրապարակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ նվիրված Գրերի գյուտի 1600-ամյակին

Հունվարի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի մատուցվեց Սուրբ եւ Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Կյուրեղ աբղ. Վարդանյանը:

Հընթացս Սուրբ Պատարագի մեծ հանդիսավորությամբ «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո Ս. Խորան բարձրացվեց Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակը՝ նվիրված Հայոց Գրերի գյուտի 1600-ամյակին, որն ընթերցեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

*ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,*
*ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ*
*ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,*
*ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ*
*ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՔՐԻՍՏՈՍԱԻԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ*
*ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ*
*ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ,*
*ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ,*
*ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ*
*ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ*

*«Յիշեաց զմեզ Տէր եւ օրհնեաց զմեզ»*
*(Սղմ. ճԺԳ. 12):*

*Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց*

*Շնորհին Աստուծոյ եւ երկնային ողորմութիւնը այցելեցին ազգիս եւ Հայաստան աշխարհիս Հայ Գրերի երեւելի գիւտով, որի 1600-ամեակը տօնախմբելու շնորհընկալներն ենք այսօր: Աղօթք բարձրացնենք երկինք, հայերէնի նորագիւտ Տառերը սեղմած սրտին՝ Հայաստանի համար, իր ազգի համար ցաւացող սրտին: Հեռաւոր ճամփորդութիւնից ուրախ էր վերադառնում. Աստուած ունկնդիր էր եղել նրա անդադրում աղօթքներին եւ օրհնել էր նրա տքնաջան աշխատանքը, օրհնել էր նրա առաքելութիւնը: «Այբ» եւ «Քէ»՝ սկիզբն Արարիչ ու վերջը՝ Քրիստոս իմաստով ձեւուն էր առել 36 նշանագիր այբբենաշարը, որպէսզի հայ ժողովուրդը մայրենի լեզուով*



*քանզի «Յիշեց մեզ Տէրն ու օրհնեց մեզ», պարգեւելով անձինք պակասոր, «որք զարդարեցին փնօրինաբար զիմաստս անեղին. հաստատելով յերկրի զգիր կենդանի»:*

*Պայծառ ու պանծալի են յիշատակները, որ պիտի ոգեկոչենք:*

*16 դար հեռուից մեր հոգու առջեւ պարզւում է հայոց կեանքի այն երջանիկ օրը, երբ Մաշտոց Վարդապետը վերադառնում էր Վաղարշապատ՝ ընթերցի Աստուածաշունչը, «եւ բոլոր մարդկանց հասնի քրիստոնէութիւնը», ճանաչելի լինեն իմաստութիւն եւ խրատ, իմանալի՝ հանճարեղի խօսքը:*

*Ճանապարհի կայաններն անցնում էր յուսառատ, քանզի գիտէր, որ հայրենի երկրում սպասում են իրեն՝ ընդունելու իր ջանքերի արգասիքը: Մովսէսն անգամ այնպէս ուրախ չէր, ասում է Մաշտոցի աշակերտ ու վարքագիր Կորիւնը, որովհետեւ երբ քաղուկներին առած աստուածագիր տախտակները, իջաւ Սինա լեռից, ժողովուրդը ոսկեձոյլ կուռքի էր երկրպագում: Մինչ Մաշտոցին անհամբերութեամբ սպասում էին Սահակ Պարթեւ Կաթողիկոսը, Վռամշապուհ Թագաւորը, նախարարացնեղ աւագանին, աշխարհահոզ դասը եկեղեցականաց, ու երբ լսեցին, թէ մօտեցել է մայրաքաղաքին, ժողովրդի բազմութեամբ ելան ընդառաջ: Եւ Արաքսի ջրերը ականատես եղան հանդիպման խնդութեանը, օրհնութեան երգերին, փառաբանական ու գոհաբանական աղօթքներին:*

*Աստուծոյ անանց խօսքը լսելի դարձնելու համար սկզբնաւորուեց հայերէն դպրութիւնը: Հայոց աշխարհի բոլոր գաւառներում Թագաւորի հրամանութեամբ եւ Հայրապետի խնամքով բացուեցին դպրոցներ, կրթուեցին մանուկներ, ազատագնեղ բանակը, եւ ժողովրդն ինքը գալիս էր դէպի «աստուածային գիտութեան բացուած աղբիւրը»: Մաշտոցեան տառերը դարձան կենդանագիր խօսքի ծառայութեան մատռուակներ, «հայաբարբառ, հայրենախօս դարձան օրէնսուսոյց Մովսէսը՝ մարգարէական գնդի հետ եւ առաջադէմ Պօղոսը բոլոր առաքելական գնդով, Քրիստոսի աշխարհակեցոյց Աւետարանի հետ միասին»: Ու բացուեցին հոգու անսպառ վրակները, աշակերտները ուսուցիչներ դարձան, թարգմանիչներ, մեկնիչներ, շարականագիր, պատմիչ ու իմաստասէր: Իմանալի լոյսի կամարով միաւորուեց Հայոց բաժանուած հողը ու երկատուած ազգային կեանքը: Աստուծոյ խօսքը յարդարեց ու զարդարեց հոգիները, հայրենի մեր երկրում ապրեցրեց փրկութեան յոյսն ու յարութեան հաւատը: Տէրը օրհնեց իր ժառանգութիւնը, որը իրենց վկայութեան կեանքով վաւերակել էին Տիրոջ սուրբ առաքեալները եւ առաքելապատիւ հաւատի մեր հայրը՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը: Արդարեւ, «Յիշեց մեզ Տէրն ու օրհնեց մեզ»:*

Շարունակությունը՝ էջ 2

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայոց Բանակի օրվա առիթով Հայրապետական Մեր ողջույնն ու օրհնությունն ենք բերում ի սփյուռս աշխարհի համայն մեր ժողովրդին եւ Մեր բարեմաղթանքներն ու շնորհավորանքները՝ մեր քաջարի բանակի զորավարներին եւ մարտիկներին:*

*Փառք Բարձրյալին, որ խաղաղ երկնքի ներքո, մեր բանակի պաշտպանությամբ ապահով՝ մեր ժողովուրդը շարունակում է իր արեւձապար կյանքը՝ վերածնվող Հայաստանի ու Արցախի վաղվա նոր օրը կառուցելու լուսավոր հույսով ու հավատով:*

*Մեր դժվարին պատմության վճռական պահերին հայոց բանակը միշտ դրսեւորել է ազատատենչ ու քաջակորով ոգի եւ մեծ հաղթանակների հասել առ Աստված հավատքով, անձնահաղթ արիությամբ ու խիզախությամբ: Այսօր մենք հիշում ենք հայ զենքի փառքը կերտած մեր պանծալի զորավարներին ու անմահ հերոսներին, ովքեր նվիրվեցին Հայրենիքի ազատության ու անկախության վեհ եւ նվիրական գործին:*

*Հայրենիքի սիրո եւ Հայրենիքին ծառայության խորհուրդը մեր հոգում աղոթք ենք բարձրացնում առ Աստված՝ հայցելով, որ Ամենակալ Տերը Իր Ամենախնամ Աջի հովանին տարածյալ պահի հայոց զորաց ու զորականաց վրա, միշտ զորեղ պահի բազուկը ու հաղթական՝ ոգին հայ զինվորի:*

*Թող Տերը անվրդով պահպանի երկնատաք խաղաղությունը աշխարհում համայն, հայրենի մեր եզերքներում՝ ի Հայաստան եւ ի Արցախ:*

*Օրհնությամբ՝*

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հունվարի 28,
2005թ.

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԱՆԱՆԻԱ Ա ՄՈԿԱՑԻ

## (946-968)

*Սկիզբը՝ 2004-ի թիվ 24, 2005-ի թիվ 1*

Անանիա Ա Մոկացու հովվապետության շրջանում մեծապես ծաղկեցին վանական հաստատությունները, աճեց նրանց թիվը: Դրան մեծապես նպաստեցին Ռոմանոս Լեկաբենոսի կողմից կայսրության տարածքում հայ հոգեւորականության հալածանքները: Չհամաձայնվելով ընդունել քաղկեդոնականությունը՝ հայ հոգեւորականները բազմությամբ եկան եւ հաստատվեցին հայոց թագավորություններում ու իշխանություններում՝ գրկաբաց ընդունվելով հոգեւորականության, իշխանական դասի եւ բնակչության կողմից: Առաջին վանքերից մեկը, որ հիմնադրեցին կայսերական հալածանքներից խուսափած կրոնավորները, Կամրջաձորի վանքն էր Արշարունյաց գավառում՝ Կապույտ գետակի ձորակում՝ կամրջի մոտ (հետագայում՝ Չալդրան): Սակայն մի ավանդության համաձայն՝ Կամրջաձոր անունով վանք է եղել Փոքր Հայքի Լիկանդոն գավառում, եւ վերջինիս վանահայր Հովհաննեսը, խաչափայտի մասունքը վերցնելով, փախչում է Բագրատունյաց թագավորություն եւ Աբաս թագավորի հովանավորությամբ կառուցում նոր Կամրջավանքը՝ 939 թվին: Սակայն մեկ այլ տեղեկությամբ՝ Հովհաննես վանահայրը Հրազեն նշան կոչված խաչափայտը բերում է Կամրջաձոր վանքը Եգերացվոց աշխարհից: Թերեւս ճիշտ է Մ. Օրմանյանը, երբ կարծում է, որ վանքն իր հայանուն կոչումն առաջին անգամ ստացավ Այրարատում: Վանական միաբանությունը հիմնեցին վանահոր հետ եկած 40 կրոնավորներ, սակայն շատ չանցած՝ միաբանության անդամների թիվը հասավ 300-ի: Հովհաննեսին հաջորդեց Պողիկարպոսը, որը հայտնի էր որպես կրոնի հավատի պահապան, իսկ նրան էլ՝ նշանավոր Սամվել Կամրջաձորեցին, որն Ասողիկի վկայությամբ՝ բազմաշնորհ էր Սուրբ Գրքերի գիտության եւ երաժշտության մեջ:

Մյուս վանքը, որ կարեւոր դեր է խաղացել Հայոց Եկեղեցու պատմության մեջ, Հոռոմոսն է կամ Հոռոմոց վանքը, քանի որ շինողները եկել էին Հոռոմոց կողմերից:

Կոչվել է նաեւ Խոշավանք՝ իր երկու քառակուսի աշտարակների պատճառով: Վանքը կառուցվեց Շիրակում՝ Հովհաննես վանահոր կողմից, որն աչքի էր ընկնում առաքինությամբ եւ ողորմած վարքով: Վանքը հիմնադրվեց Աբաս թագավորի օրոք, հետո ավերվեց Ապլհաճ պարսիկ ամիրայի ձեռքով եւ վերստին շինվեց Հովհաննես Սմբատ թագավորի կողմից եւ թերեւս այդ ժամանակներից էլ ստացավ Սբ. Հովհաննես անունը: Իսկ մինչ այդ այն կոչվել է Սբ. Ծողակաթ:

Նորաշեն է համարվել Շիրակի Դպրեվանքը, սակայն այն միայն վերաշինվել էր, քանի որ նրա գոյությունն արձանագրված է արդեն VII դարում՝ կապված Բարսեղ Ճոն վարդապետի ժամանակների հետ: Նշանավոր էր Կապուտքարի վանքը, որը տեղադրում են Կապույտ գետի ձորում՝ Երասխաձոր գավառում: Դերջան գավառում հիմնվեց Խլաձորի Սբ. Գրիգոր վանքը՝ Սիմոն վարդապետի կողմից: Վերջինիս հաջորդեցին Պետրոս եւ Բարսեղ վանահայրերը: Վարդիկ հայրը հիշվում է որպես Վանգո վանքի հիմնադիր՝ ընկերակից ունենալով Կարմիր հորը: Նրանք եկել էին Ծոփաց աշխարհի Պաղնատուն գավառից: Կարնում հիմնադրվեց Հնձուց վանքը՝ Սարգիս վարդապետի կողմից: Վանքն իր անունը ստացավ մոտակա Հինձք գյուղի անունով եւ հայտնի է նաեւ Սբ. Աստվածածնի Կարմիր վանք անունով: Վասպուրականի Ռշտունյաց գավառում հիմնադրվում է Նարեկի վանքը, որին մեծ հռչակ բերեց խոսրով Անձեւացու խնամի Անանիա Նարեկացին: Նա եղել է Հովհաննես եւ Գրիգոր Նարեկացիների ուսուցիչը, նրան աշակերտել է Ուխտանես պատմիչը: Վայոց ձորում Ստեփանոս վարդապետը հիմնեց Ցախացքարի վանքը, Ձորագետ գավառում մեծ հռչակ ձեռք բերեցին Սանահինի Սբ. Ամենափրկիչը եւ Հաղբատի Սբ. Նշանը, որոնք արդյունավոր մշակութային եւ հոգեւոր գործունեություն ծավալեցին նաեւ հետագա դարերում: Սանահինի վանքը կառուցվեց 957 թվին, իսկ 10 տարի անց՝ 967-ին՝ Հաղբատը՝ Աշոտ Գ Ողորմած թագավորի կնոջ՝ Խոսրովանույշ թագուհու կողմից: Սանահինի առաջին վանահայրն էր Հովհաննես վարդապետը, իսկ Հաղբատինը՝ Սիմեոն վարդապետը: Երկու վանքերի միաբանների թիվը հասել է շուրջ 500-ի: Մեծապես պայծառացավ Տաթեւի վանքը, որին բազմաթիվ գյուղեր ու ագարակներ նվիրվեցին:

Անանիա Ա Մոկացու կարգադրությամբ՝ քաղկեդոնական ծեսով մկրտվածները կրկին մկրտվեցին, եւ այդ կատարվեց մի խումբ նշանավոր հոգեւոր այրերի խորհրդով: Կրկնամկրտությունը Հայոց Եկեղեցուն հատուկ չէր, սակայն այդ իրականացվեց գործնական խնդիրներից ելնելով՝ կապված քաղկեդոնականության հալածանքների հետ:

Անանիա Ա Մոկացին հովվապետեց նաեւ Աշոտ Գ Ողորմածի 24-ամյա թագավորության շրջանում: Վերջինս մեծապես նպաստել է կաթողիկոսի եկեղեցաշեն գործունեությանը՝ անձամբ կամ իր կնոջ՝ Խոսրովանույշ թագուհու միջոցով: Աշոտ Գ-ն էր, որ կառուցեց Անիի փոքր պարիսպը, որ հայտնի է Աշոտաշեն անունով: Հայոց թագավորը հաջող պատերազմներ մղեց կովկասյան լեռնականների դեմ: Հայոց բանակը՝ մարզպետական գնդով՝ թվով 45000 զինվոր, Գեւորգ Մարզպետունու որդու՝ Գոռ սպարապետի գլխավորությամբ եւ թագավորի մասնակցությամբ երեք տարվա ընթացքում վերջ տվեց լեռնականների արշավանքներին: 959 թվին հայկական բանակը ջախջախեց Աղձնիքի ամիրա Համդանի բանակը, որն ապստամբելով ամիրապետի դեմ՝ ասպատակում է շրջակա գավառները: Անին մայրաքաղաք դարձնելուց հետո Աշոտ Գ-ի դեմ դուրս եկավ նրա կրտսեր եղբայր Մուշեղը՝ իրեն թագավոր հռչակելով Կարսում: Գործը կռվի չհասավ: Մուշեղն ընդունեց եղբոր գերագույն իշխանությունը, իսկ Աշոտն էլ՝ նրա թագավորական տիտղոսը՝ լինելով շահանշահի կամ արքայից արքա Հայոց եւ Վրաց: Աշոտ Գ-ի օծման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ 961 թվին Անի մայրաքաղաքում՝ Անանիա Ա Մոկացու կողմից, որին մասնակցեցին նրան վասալ թագավորիկներն ու իշխանները:



Անանիա Ա Մոկացին՝ Հայոց Առաքելական Եկեղեցու մեծ պաշտպանն ու հայոց միասնության կրողը, մահացավ 968 թվին Անիում կամ Շիրակավանում, եւ նրա դին հողին հանձնվեց Արգինայի վանքում, որը դարձել էր հայոց հայրապետանոցը:

*Շարունակելի*

*Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Տես էջ 2

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ուխտագնացություն Ս. Էջմիածին

Հունվարի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արարատյան հայրապետական թեմի երիտասարդական միությունների եւ երիտասարդական շարժման շուրջ 300 անդամների՝ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի գլխավորությամբ:

Սրբազան հայրն Ամենայն Հայոց Հայրապետին ներկայացրեց երիտասարդական միություններն ու շարժումը եւ նրանց անդամներին: *«Այսօր բարեբաստիկ առիթ է ընծայվել մեզ՝ վերստին ուխտի գալու Սուրբ Էջմիածին, մեր հավատքը ամրապնդելու, հոգին զորացնելու, ստանալու Վեհափառ Հայրապետի հայրապետական պատվիրանները»*,- ասաց Նավասարդ սրբազանը:

Հայոց Հայրապետը, իր գնահատանքը հայտնելով Նավասարդ սրբազանին, իր բարեմաղթանքներն ու օրհնությունը հղեց երիտասարդներին: Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ Արարատյան թեմում երիտասարդական շարժումը նման ծավալ է ստացել՝ աստվածահաճո ու հայրենանվեր գործունեությամբ խանդավառելով եւ ընդգրկելով նոր անդամների: *«Մենք մեր առաքելության մեջ կարեւորում ենք երիտասարդության հաղորդակցությունը, սերտ հարաբերությունը մեր Եկեղեցու հետ, որովհետեւ Եկեղեցու ուժը, զորությունը երիտասարդությունն է... Դուք, ավետարանական խոսքի համաձայն, այն խմորն եք, որ պիտի կարողանաք հունցել ամբողջ զանգվածը, Ավետարանի այն լույսն եք, որ պիտի կարողանաք լուսավորել հասարակական մեր կյանքը... հասարակություն, որ պիտի ապրի քրիստոնեական պատվիրաններով ու պատգամներով, որ պիտի կարողանա կյանք դարձնել, հայ մարդու կենցաղի մեջ բերել մեր հայրերի սրբազան հավատքը եւ այդ հավատքով շաղախել հայրենական մեր կյանքը»*,- մասնավորապես ասաց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը անդրադարձավ նաեւ Եկեղեցու եւ ազգի առջեւ ծառացած մարտահրավերներին եւ կոչեց երիտասարդներին՝ ամենայն հանձնառությամբ, զոհողությամբ ու նախանձախնդրությամբ պահել ու պահպանել ազգային ու հոգեւոր միասնությունը եւ իրենց անհատական ներդրումն ունենալ այդ առաքելության իրագործման մեջ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց նաեւ ազգային, եկեղեցական կյանքին վերաբերող բազում հարցումների:

## Ս. ՍԱՐԳՍԻ ՏՈՆԸ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ

Հունվարի 22-ը նշանակալից էր Մոսկվայի առաջնորդանիստ Ս. Հարություն եկեղեցու համար: Ինչպես մայր հայրենիքում, այնպես էլ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմում Սուրբ Սարգսի տոնին՝ Երեկոյան կիրակնամուտի հանդիսավոր ժամերգությունից հետո, տեղի ունեցավ երիտասարդների օրհնության կարգը: Հավաքված բազմաթիվ երիտասարդներին օրհնության խոսք ուղղեց Տ. Արիստակես քհն. Հովհաննիսյանը: Նա հորդորեց, որ մայր հայրենիքից հեռու լինելով՝ ապրել ազգային ավանդություններով, որով էլ պայմանավորված է որպես հավաքականություն եւ ազգ մեր գոյությունը, եւ ապա մաղթեց, որ Ս. Սարգիսը, իբրեւ մեր երիտասարդության հովանավոր սուրբ, Աստծո առաջ իր բարեխոսությամբ հանապազ զորացնի երիտասարդներին՝ նրանց քայլերը մշտապես ուղղելով դեպի Մայր եկեղեցի:

Վերջում ներկաներին բաժանվեցին Ս. Սարգսի վարքը եւ օրվա խորհուրդը ներկայացնող թերթոններ, ինչպես նաեւ Ս. Մատթեոսի եւ Ս. Հովհաննեսի Ավետարանների գրվածքները ընթերցանությամբ ներկայացնող ձայներիզներ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

## Ուղղափառ Եկեղեցիների հավաք Հռոդոսում

Հունվարի 10-17-ը Հունաստանի Հռոդոս կղզում տեղի ունեցավ Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչների հավաք:

Հավաքի նպատակը 2006 թվականի փետրվարին Բրազիլիայի Պորտո Ալեգրո քաղաքում «Աստված, Քո շնորհով փոխի՛ր աշխարհը» խորագրի ներքո տեղի ունենալիք ԵՀԽ-ի 9-րդ համաժողովի նախապատրաստումն էր: ԵՀԽ համաժողովներից առաջ Ուղղափառ Եկեղեցիների նման հավաքները դարձել են ավանդական: ԵՀԽ անդամ Ուղղափառ Եկեղեցիների ընտանիքը, որ բաղկացած է Բյուզանդական ավանդության Արեւելյան Ուղղափառ եւ Հին Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիներից, կազմում է ԵՀԽ ընտրողների կեսը:

Հավաքին մասնակցում էին ԵՀԽ անդամ Ուղղափառ Եկեղեցիների ավելի քան 50 բարձրաստիճան եկեղեցականներ եւ աստվածաբաններ:

Ուղղափառ Եկեղեցիների հավաքին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացնում էր Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքության անունից հավաքը հյուրընկալել էր Հռոդոսի Կիրիլ մետրոպոլիտը, ով կատարեց հավաքի բացումը Հռոդոսի Ավետման մայր տաճարում:

Ողջունելով մասնակիցներին՝ Հռոդոսի Մետրոպոլիտ Կիրիլն անդրադարձավ ԵՀԽ 9-րդ համահավաքի խորագրի կարեւորությանը՝ բնորոշելով այն որպես աղոթք. «Միայն Աստծո շնորհով է եւ գերազանցապես եկեղեցական խորհուրդներին մասնակցելու կյանքով է, որ մենք կարողանում ենք փոխվել ու նորոգվել»:

Հավաքի բացմանը ներկա էին նաեւ Հռոդոսի քաղաքապետը եւ պետական այլ գերատեսչությունների ներկայացուցիչներ:

Հավաքը նախագահում էին Սասիմայի Գենադիոս մետրոպոլիտը (Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքություն) եւ Դամիեթի Բիշոյ մետրոպոլիտը (Ալեքսանդրիայի Ղպտի Ուղղափառ Եկեղեցի):

ԵՀԽ անդամ բոլոր Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները կազմեցին մի փաստաթուղթ, որով ներկայացնում են ԵՀԽ 9-րդ համահավաքի նկատմամբ Ուղղափառ Եկեղեցիների աստվածաբանական դիրքորոշումը եւ ակնկալիքները:

Աստվածաբանական թեմաներով բանախոսելուց զատ, հավաքն անցավ աղոթական մթնոլորտում՝ առավոտյան ժամասացությամբ, օրվա խորհուրդը ներկայացնող քարոզներով եւ հավաքի թեմայի շուրջ խոկումներով:

Ներկաները նաեւ աղոթքով հիշեցին 2004 թ. դեկտեմբերի 26-ին Հնդկական օվկիանոսում տեղի ունեցած աղետը եւ դրանից զոհվածներին ու տուժածներին:

Հավաքի օրերին մասնակիցներն այցելեցին ուղղափառ վանքեր եւ համայնքներ:

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հունվարի 18-ին Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը մեկնեց Իտալիա՝ մասնակցելու մի շարք միջեկեղեցական միջոցառումների:

Հունվարի 19-ին սրբազան հայրը, որպես Հայոց Հայրապետի ներկայացուցիչ, ներկա գտնվեց Վատիկանի Սուրբ Պետրոս մայր տաճարի արտաքին պատին կանգնեցված Ս. Գրիգոր Լուսավորչի արձանի օրհնության արարողությանը, որը կատարվեց Հռոմի սրբազան Քահանայապետ Հովհաննես Պողոս Երկրորդ Պապի կողմից:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ առաքելաշավիղ Հայրապետը, որ Հայ Եկեղեցու ու հայ ժողովրդի մեծագույն սուրբն է, ընդունվում է նաեւ Կաթոլիկ եւ Ուղղափառ Եկեղեցիների կողմից: Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոնը Կաթոլիկ Եկեղեցում տոնվում է սեպտեմբերի 30-ին:

Գերաշնորհ Տ. Մեսրոպ արք. Գրիգորյանը Հռոմում մասնակցեց Գրիգոր Նարեկացու 1000-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին, Նեապոլում հունվարի 24-25-ը Սանտ Էջիդիո բարեգործական էկումենիկ կազմակերպության կողմից Քրիստոնեական Միության համար իրականացվող «Աղոթքի շաբաթին», իսկ հունվարի 25-30-ը՝ Հռոմում անցկացվող Կաթոլիկ եւ Հին Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների միջեւ աստվածաբանական երկխոսությանը:

*Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի*
*Միջեկեղեցական հարաբերությունների բաժին*



Սկիզբը՝ թիվ 1

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# Դասական եւ ժամանակակից հայ գրականության գրականագիտական յուրացումը

Գրականագիտությունն ընդհանուր առմամբ ունի հայագիտական ուղղվածություն: Վերջին շրջանում թեեւ շատացել են արտասահմանյան գրականություն մասնագիտությամբ պաշտպանության ներկայացվող ատենախոսությունները, բայց արտասահմանյան գրականության ուսումնասիրությունը՝ որպես ընդհանուր հայ գրականագիտության մի մաս, որեւէ կշիռ չունի մեր գրականագիտության մեջ: Նախ, շատ պատահական են ընտրված դրանց թեմաները, երկրորդ՝ թույլ է դրանց մեջ տվյալ հեղինակի ստեղծագործության յուրացման եւ բացահայտման աստիճանը, երրորդ՝ դրանք ավելի շատ թողնում են ստվերային տպավորություն, անինքնուրույն են եւ անորոշ: Այս բնագավառում պետք է լինի որոշակի ծրագրային եւ նպատակային ուղղվածություն: Այն ամբիոնը, որը Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում ղեկավարում է համապատասխան ոլորտը, աշխատանքները տանում է որոշակի ուղղվածությամբ՝ ուսումնասիրության նյութ դարձնելով օտարագիր հայ գրողների ստեղծագործությունը: Հետազոտության տարբեր փուլերում են Մայքլ Արլենի, Մայքլ Արլեն Կրտսերի, Լեւոն-Զավեն Սյուրմելյանի, Վահե Քաչայի, Փիթեր Բալաքյանի ստեղծագործություններին նվիրված ատենախոսությունները:

Իսկ Վիլյամ Սարոյանն իր վիթխարի ժառանգությամբ դեռեւս, ըստ էության, ամբողջական եւ խոր ընդգրկումով յուրացված չէ մեր գրականագիտության կողմից:

Իսկ ռուս գրականության ուսումնասիրությունը Հայաստանում, ինչպես արդեն նշեցի, իրեն սպառած գրական կապերից այն կողմ չանցավ եւ ըստ էության չէր էլ կարող անցնել, որովհետեւ դիմացը հզոր եւ շատ բովանդակալից ռուս գրականագիտությունն է:

Ահա գրականագիտության այս երկու կողմերի առանձնացումով, դրանք մի կողմ դնելով, մնում է հայագիտությունը, իր հիմնական նյութի՝ հայ գրականության գրականագիտական յուրացման չափով, սկզբունքներով, որակով ու վաստակով:

Անդրադառնանք հայ գրականության առանձին փուլերին՝ նշելով դրանց գրականագիտական յուրացման աստիճանը:

**Հին եւ միջնադարյան շրջան:** Սա մեր գրականության համեմատաբար լավ ուսումնասիրված շրջանն է, որին իրենց վաստակն են նվիրել թե՛ ժամանակակից ուսումնասիրողները՝ Մատենադարանի, Գրականության ինստիտուտի ու բուհերի հայ հին գրականության բաժինների ու ամբիոնների աշխատակիցները, թե՛ Մխիթարյան միաբանության հայագետներն ու այլազգի արեւելագետներ: Այդ ամենն արտահայտվել է բանասիրական, բնագրագիտական, վերլուծական հսկայական աշխատանքով: Սակայն, այս ամենով հանդերձ, հայ հին եւ միջնադարյան գրականությունը շարունակում է մնալ արդի հայագիտության, նաեւ գրականագիտության ուշադրության կենտրոնում, որ նշանակում է՝ շարունակել սեւեռուն ուշադրության կենտրոնում պահել հանգուցային այնպիսի հիմնահարցերի ուսումնասիրությունը, ինչպիսիք են՝

ա) նախամաշտոցյան գիրը, ընդհանրապես՝ նախամաշտոցյան շրջանի գրային մշակույթը,

բ) նախաքրիստոնեական արվեստը, այդ թվում՝ գրականությունը,

գ) Ագաթանգեղոսի եւ Բուզանդի առեղծվածը,

դ) ընդհանրապես 5-րդ դարի մատենագիտությունը,

ե) քրիստոնեական գաղափարախոսությունը եւ հայ գրականությունն ու ընդհանրապես մշակութաբանությունը, դրանց կապն ու արտահայտությունը,

զ) Գրիգոր Նարեկացին եւ համաշխարհային քրիստոնեական գրականությունը, Նարեկացին եւ նրան նախորդող ու հաջորդող ամբողջ հայ գրականությունը,

է) հայ միջնադարյան գրականությունը տարածաշրջանային գրականությունների ընդհանուր համապատկերում,

ը) Նահապետ Քուչակի ու Սայաթ-Նովայի կյանքի ու ստեղծագործության չբացահայտված հարցերը,

թ) ընդհանրապես, հայ հին եւ միջնադարյան գրականությունը պահանջ ունի քննության ենթարկելու ծագումնաբանական նախադրյալների, գրական կապերի, ազդեցությունների, Արեւելքի ու Արեւմուտքի մշակույթների փոխազդեցությունների համապարփակ ընդգրկումով,

ժ) մեծագույն հարգանքի է արժանի Մ. Աբեղյանի «Հայ հին գրականության պատմություն» (1944-1946) աշխատությունը, որի ստեղծումից անցել է արդեն վեց տասնամյակ: Հայագիտությունը, այդ թվում՝ միջնադարագիտությունը, մեծ առաջընթաց է կատարել, եւ ժամանակն է, արդյունքներն ի մի բերելով, ստեղծել հայ հին եւ միջնադարյան գրականության պատմության նոր շարադրանք:

Ընդհանրապես, հայ հին եւ միջնադարյան գրականության ուսումնասիրությունը կարիք ունի արդիական գրականագիտական հայացքի: Նյութի բնագրային, հեղինակների առանձին, մեկը մյուսից կտրված ուսումնասիրություններից վաղուց ժամանակն է անցնելու ընդհանուր գաղափարական, գեղագիտական, տեսական օրինաչափությունների բացահայտմանը: Վիթխարի շտեմարան է այդ շրջանի գրականության արվեստի զինանոցը: Այնպես պետք է անել, որ հայ հին եւ միջնադարյան գրականության ուսումնասիրությունը ներգրավվի կենդանի գրականագիտական կյանքի մեջ: Այդ երազանքն ունեին դեռեւս Հ. Թումանյանը, Ե. Չարենցն ու Ա. Բակունցը: Իսկ դա իրագործողը՝ Պ. Սեւակը, չհասցրեց իրականացնել իր հիմնական աշխատանքը եւ ամբողջացնել որոնումների արդյունքը: Այն աննշմար, բայց մեկուսացնող պատնեշը, որ առկա է ժամանակակից եւ հայ հին ու միջնադարյան գրականությունների միջեւ, պետք է գրականագիտության կողմից հիմնավորապես հաղթահարվի, որ նշանակում է՝ լայնացնել ու խորացնել տեսադաշտը եւ մշտապես զգալ հայ գրականության 1600 տարվա կենդանի շնչառությունը:

**Նոր շրջան:** Հայ գրականագիտությունը ծանրակշիռ վաստակով է ներկայանում Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Ս. Շահազիզի, Պ. Դուրյանի, Գ. Սունդուկյանի, Պ. Պռոշյանի, Ղ. Աղայանի, Րաֆֆու, Հ. Պարոնյանի, Հ. Հովհաննիսյանի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Մ. Մեծարենցի, Դ. Վարուժանի եւ այլոց ժառանգության ուսումնասիրության ու բնագրերի հրապարակման ասպարեզում: Մի բան, ինչը մասնակի կամ թերի է իրականացված դարասկզբի արեւմտահայ եւ արեւելահայ որոշ հեղինակների ժառանգության առումով: Մենք առ այսօր չունենք Վ. Տերյանի երկերի գիտական հրատարակությունը, եւ որքան հայտնի է, աշխատանքներ էլ չեն տարվում այդ ուղղությամբ: Միեւնույն ժամանակ Տերյանը կարիք է զգում նորովի ամբողջական ու խոր գրականագիտական ուսումնասիրության: Նույնը պետք է ասեմ նաեւ Ա. Յարճանյանի (Սիամանթո), Ռ. Սեւակի, Վ. Թեքեյանի կապակցությամբ:

Շարունակությունը՝ էջ 6

**Գեւորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոս**

# ՀՐԱՇՔԻ ՏԵ՞ՆՉ, ԹԷ՞ ՀԱՒԱՏ

## անտիպ քարոզներից

Սկիզբը՝ թիվ 1

Մի՞թէ Յիսուսի ձեռքով կատարուած հրաշքներից մի քանիսը երբեմն չհամարուեցան Բեեղզեբուղի զօրութեամբ կատարուած գործեր: Եւ կամ այսօր էլ շատ երեւոյթներ մի՞թէ ոմանք չեն բացատրում իբրեւ հրաշք, այնինչ ուրիշները՝ զուգադիպութեամբ կատարուած պատահական երեւոյթներ:

Օրինակ՝ անցնում է մէկը փողոցով, եւ յանկարծ տան կտուրից պոկուած քարը կամ աղիւսը ջախջախում է նրա գլուխը եւ մահացնում: Ինչպէ՞ս է բացատրւում այս երեւոյթը: Ոմանք համարում են պատահական մի երեւոյթ, իսկ ուրիշները աստուածային պատիժ են տեսնում նրա մէջ, մանաւանդ երբ մահացողը վատահամբաւ մէկը լինի:

Աղօթում ենք, յատուկ մաղթանքներ կատարում, զոհեր մատուցանում, որ անձրեւ գայ. եւ ահա անձրեւում է: Ինչպէ՞ս է բացատրւում. հաւատացողները աստուածային գործ են համարում, ուրեմն եւ հրաշք ճանաչում, իսկ անհաւատները՝ զուգադիպութեամբ կատարուած պատահական մի երեւոյթ եւ ոչ այլ ինչ: Այս մէկ:

Երկրորդ՝ Աստուած չի կամենում ստիպել, որ հաւատանք, այլ կամենում է մեզ ներքնապէս համոզել: Հրաշքը, որ տեսնում են ինչպէս հաւատացեալները, նոյնպէս նաեւ թերահաւատներն ու անհաւատները, րոպէապէս ազդում է մարդու վերայ. նա արտաքնապէս, զգայարանական տպաւորութեան շնորհիւ, բռնանում է մեզ վերայ, սակայն ներքին համոզմունք, հաւատ չի ծնում մեր մէջ: Իսկ Աստուած չի կամենում բռնանալ մեր հոգու վերայ, որ ազատ է ստեղծել մեզ, այլ կամենում է համոզել մեզ: Նա դիմում է մեր սրտին, մեր խղճին, մեր կամքին՝ կամենալով բանալ մեր հոգու աչքը, յուզել մեր խիղճն ու կամքը՝ Աստծուն՝ Իրեն, Նրա խօսքն ու Նրա էութիւնը ըմբռնելու եւ ճանաչելու:

Ինչ որ ձեռք է բերւում մեր զգայարանքների միջոցով, նա թոյլ է եւ փոփոխական. իսկ ինչ ձեռք է բերւում ազատօրէն, իբրեւ ներքին համոզմունք, մեր հոգու ներքին զգացմամբ՝ նա անջնջելի է մնում մեր ներքին աշխարհում: Եւ ահա այդ ներքին համոզմունքն է, որի համար ընդունակ է մարդ մարտնչելու եւ տանջուելու: Ահա այդ է հաւատը, եւ այդ հաւատն է զօրաւոր եւ անյաղթելի:

Այստեղ տեղին է ուշադրութեան առնել հոգու այն ապրումը, որ ունի համարեա ամեն մի մարդ: Կա՞յ մի այլ աշխարհ, քան այս աշխարհը. կա՞յ հոգիների երկինք. ապրո՞ւմ են հաւատով մեռնողները (երանելիները): Ահա հարցեր, որոնք զբաղեցրել եւ զբաղեցնում են բոլորին: Չպիտի զարմանալ, որ այս հարցերը, իրենց հոգեմաշ կասկածներով, հաւատացեալներին, մինչեւ իսկ հաւատով լի հոգեւոր անձանց մեծ հոգս են պատճառում: Երբ մարդ մահուան ամբողջ սարսուռը զգացել է իր հարազատի մահուան առթիւ, երբ նա սեւեռել է իր հարցական հայեացքը հարազատ մեռեալի դէմքին եւ չի ստացել այն մեծ հարցի պատասխանը, թէ ի՞նչ է սպասում իրեն, ի՞նչ է լինելու իր ապագայ վիճակը, մի՞թէ զարմանալի կլինի, երբ նա մտածէ, թէ արդեօք այն բոլորը, որ պատմւում է միւս աշխարհի մասին, գեղեցիկ երազ չէ՞: Ի՞նչ կտար մի վշտահար մայր իր վշտի առաջին մոմենտին, եթէ իր մեռած զաւակի մխիթարիչ ձայնը լսէր թէ՝ «Ուրախացի՛ր, մայր իմ, ես երկնքումն եմ. այն ամէնը, որ դու ինձ պատմել ես այստեղի մասին, ճշմարիտ է. սակայն նա աւելի գեղեցիկ է, քան քո պատմածը»:



Բայց, աւա՜ղ, միւս աշխարհից եկողը չկայ, եւ ոչ ոքի ձայն էլ չի լսւում. եւ երբ մէկը, իր խոր վշտի րոպէին, համարձակւում է ձայնել՝ Տէ՛ր, հրաշքդ ցուցուր, երկինքը համր է մնում:

Այսպիսի դէպքում էականն այն է, որ մարդ կարողանայ թողնել հրաշատենչ ոգին եւ հաւատայ: Այս խորհուրդն է տալիս եւ մեր մեծ Վարդապետը՝ Յիսուս: «Նոքա ունին Մովսէս ու մարգարէներ, թող նոցա՛ լսեն». մեծատան եւ աղքատ Ղազարոսի առակի այս վերջաբանը ի՞նչ է ասում մեզ: Մի՞թէ սա չի նշանակում, թէ ով Յիսուսին եւ առաքեալներին եւ այնուհետեւ մինչեւ մեր օրերը նոցա հետեւորդներին հոգու ներքին աչքով եւ ականջով չի տեսել եւ չի լսել, անօգուտ կլինի, եթէ մեռեալներից մէկն էլ գայ եւ երեւի իրեն: Սա չի՞ նշանակում թէ՝ «Ձեզ այլ նշան չի տրուի, բայց եթէ Յովնանու նշանը»: Սա չի՞ նշանակում, թէ ձեզ հրաշք չի տրուի: Պարզ է, որ Յիսուս մերժում է տալ արտաքին նշան՝ հրաշք, եւ այդ Նրա իմաստութեան եւ բարութեան նշանն է: Նա վարւում է փորձուած ուսուցչի նման, որ աշակերտի լուծելիք խնդրի պատասխանը չի տալիս, այլ թողնում է, որ աշակերտը ինքնաշխատութեամբ, ուսուցչի ղեկավարութեամբ լուծէ: Այսպէս նաեւ Աստուած կամենում է, որ մեր ներքին մարդն աճի, զարգանայ եւ գիտակցական դառնայ, որ մենք հոգու աչքով տեսնենք անտեսանելի աշխարհը եւ ապրենք նրա իրականութեամբ:

Շարունակությունը՝ էջ 8

# ԱՆԱՊԱԿ ԲԱԺԱԿԻ

## ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՆԴԱՍՏԱՆՈՒՄ



*Սկիզբը՝ 2004-ի թիվ 18-24, 2005-ի թիվ 1*

### Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ «ՎԵՐՆԱՏԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ» ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Աստվածաշունչ մատյանից գիտենք, որ Ս. Հաղորդության խորհուրդը հաստատել է մեր Տեր Հիսուս Քրիստոսը Ավագ Հինգշաբթի օրը՝ Վերջին ընթրիքի ժամանակ: Քրիստոսի Եկեղեցու համար հիշարժան այս դեպքի մասին գրում են ս. Մատթեոս, ս. Մարկոս, ս. Ղուկաս ավետարանիչները, ինչպես նաև ս. Պողոս առաքյալը՝ կորնթացիներին ուղղած իր առաջին նամակում: Խնդրին անդրադարձել է նաև ս. Հովհաննես աստվածաբան ավետարանիչը՝ իր Ավետարանի Զ գլխի 32-59 համարներում: Սակայն նա խոսում է Քրիստոսի մարմնի եւ արյան մասին՝ ոչ թե ներկայացնելով Ս. Հաղորդության խորհրդի հաստատման պատմությունը, այլ բացատրելով դրա իմաստը: Նա թեպետ իր Ավետարանի ԺԳ գլխում հավելում է Ավագ Հինգշաբթի օրը Հիսուսի՝ աշակերտների ոտքերի լվանալու պատմությունը, սակայն չի անդրադառնում Ս. Հաղորդության խորհրդի ժամանակ Տիրոջ ասած խոսքերին, որոնք շատ էական են մեր ուսումնասիրության համար: Այդ իսկ պատճառով էլ ստորեւ բերվող զուգահեռ տեքստերում այն չենք ներառել:

| *Մատթ. ԻԶ 26-29* | *Մարկ. ԺԴ 22-25* | *Ղուկ. ԻԲ 17-20* | *Ա Կորնթ. ԺԱ 23-25* |
| --- | --- | --- | --- |
| *Եւ մինչդեռ ուտէին նոքա, ա՛ռ Յիսուս հաց՝ օրհնեա՛ց եւ եբե՛կ, եւ ետ աշակերտացն՝ եւ ասէ. Առէ՛ք կերա՛յք՝ ա՛յս է մարմին իմ: Եւ առեալ բաժակ գոհացա՛ւ՝ ետ նոցա եւ ասէ. Արբէ՛ք ի դմանէ ամենեքին, զի ա՛յդ է արիւն իմ նորո՛յ ուխտի, որ ի վերայ բազմաց հեղու ի թողութիւն մեղաց: Բայց ասե՛մ ո՛չ եւս արբից յայսմ հետէ ի բերոյ որթոյ մինչեւ ցօրն ցայն՝ յորժամ արբից զդա ընդ ձեզ նո՛ր յարքայութեան Հօր իմոյ:* | *Եւ մինչդեռ ուտէին, առեալ Յիսուսի հաց՝ աւրհնեա՛ց եւ եբեկ՝ ետ նոցա՝ եւ ասէ. Առէ՛ք՝ ա՛յդ է մարմին իմ: Եւ առեա՛լ բաժակ՝ գոհացաւ ե՛տ նոցա, եւ արբի՛ն ի նմանէ ամենեքեան: Եւ ասէ ցնոսա. Ա՛յս է արիւն իմ նորոյ ուխտի, որ փոխանակ բազմաց հեղու: Ամէն ասե՛մ ձեզ, թէ ո՛չ եւս յաւելից ըմպել ի բերոյ որթոյ, մինչեւ ցօ՛րն ցայն՝ յորժամ արբից զնա նո՛ր յարքայութեան Աստուծոյ:* | *Եւ ընկալեալ բաժակ՝ գոհացա՛ւ եւ ասէ. Առէ՛ք զայդ՝ եւ բաժանեցէ՛ք ի ձեզ: Ասե՛մ ձեզ, թէ յայսմ հետէ՝ ո՛չ արբից ի բերոյ որթոյ, մինչեւ եկեսցէ արքայութիւն Աստուծոյ: Եւ առեալ հաց. գոհացա՛ւ, եբե՛կ եւ ետ նոցա՝ եւ ասէ. Ա՛յս է մարմին իմ, որ վասն բազմաց տուեալ. զա՛յս արասջի՛ք առ իմոյ յիշատակի: Նոյնպէս եւ զբաժակն յետ ընթրեա՛ցն առ՝ եւ ասէ. Ա՛յս բաժակ է նո՛ր ուխտ՝ իմով արեամբ վասն ձեր հեղեալ:* | *Զի ես ընկալայ ի Տեառնէ, զոր եւ ձեզն աւանդեցի, եթէ Տէր Յիսուս ի գիշերին յորում մատնէր, ա՛ռ հաց. գոհացա՛ւ. եբե՛կ եւ ասէ. Ա՛յս է իմ մարմին որ վասն ձեր. զա՛յս արարէք առ իմոյ յիշատակի: Նոյնպէս եւ զբաժակն յետ ընթրեացն, ա՛ռ եւ ասէ. ա՛յս բաժակ նոր ուխտ է իմով արեամբ. զա՛յս արարէ՛ք քանիցս անգամ թէ ըմպիցէք՝ առ իմոյ յիշատակի:* |

Վերոգրյալից պարզ է դառնում, որ Ս. Հաղորդության խորհրդի մասին Պողոս առաքյալի նկարագրությունն ավելի հին է, քան Համատես Ավետարաններինը (այս եւ հարակից խնդիրների մասին տե՛ս The Study of Liturgy, Edited by Cheslyn Jones, Geoffrey Wainwright, Edward Yarnold SJ, Paul Bradshaw, SPCK London, Oxford University Press, New York 1997, p. 190, 194, The Shape of the Liturgy by Dom Gregory Dix, Dacre press Adam & Charles Black London, 1960, p. 61-70): Քրիստոսի անխոնջ աշակերտն այս նամակը գրել է շուրջ 55 թ. (Introduction to the New Testament, Revised Edition by Werner Georg Kümmel, Translated by Howard Clark Kee, Nashville, Abingdon, 1973, p. 279, Ներածություն Նոր Կտակարանի, պատրաստեց՝ Եզնիկ ծայրագույն վարդապետ Պետրոսյանը, Ս. Էջմիածին, 1996, էջ 92), այսինքն՝ պատմական այդ դեպքից ընդամենը երկու տասնամյակ հետո, ինչպես ինքն է պարզ ի պարզո գրում. *«Զի ես ընկալայ ի Տեառնէ, զոր եւ ձեզն աւանդեցի»* (Ա Կորնթ. ԺԱ 23): Հետեւաբար այն շատ կարեւոր սկզբնաղբյուր է Տիրոջ մարմնի եւ արյան խորհուրդն ուսումնասիրողների համար: Չնայած այս ամենին, ավետարանիչների եւ Պողոս առաքյալի կողմից օգտագործված բառերն ու արտահայտությունները միանշանակ չեն ընկալվել քրիստոնեական Եկեղեցիներում՝ տեղիք տալով զանազան մեկնաբանությունների:

Ընթերցելով Ս. Խորհրդի վերաբերյալ հատվածները՝ տեսնում ենք, որ ե՛ւ ավետարանիչները, ե՛ւ Պողոս առաքյալը չեն խոսում Քրիստոսի կողմից օգտագործված գինու մասին: Նրանք գինու փոխարեն օգտագործում են «բաժակ» բառը: Բայց քանի որ հաջորդիվ մեր Տերն ասում է, որ Ինքն այլեւս չի խմելու որթատունկի բերքից, ուստի մեկնիչները եզրակացնում են, որ Վերջին ընթրիքի ժամանակ Քրիստոսը գինի է օգտագործել: Բացի սրանից, այս մասին խոսում են նաեւ ժամանակի աղբյուրներն ու Եկեղեցու հայրերը (այս մասին տե՛ս http://www.catholicapologetics.net/Wine_Last_Supper.htm):



Հռոմեադավան վարդապետության համաձայն՝ այստեղ օգտագործված «բաժակ» բառը ոչ թե անապակ գինու անունն է, այլ այն ամանի, որի մեջ խառնվում են ջուրը եւ գինին: Նրանք նշում են, որ սրանով իրականություն է դառնում դարեր առաջ Սողոմոն իմաստունի մարգարեական խոսքը՝ մեջբերելով Առակաց գրքի Թ 2, 5 համարները (այս համարին մենք դեռ անդրադառնալու ենք մեր ուսումնասիրության մեջ): Վերջինիս այս մարգարեությունը հայտնվում է խաչի վրա, երբ Հիսուսի կողից արյուն եւ ջուր են բխում: Իսկ համարս էլ, բնականաբար, ցույց է տալիս, որ Ս. Պատարագը պետք է կատարել ոչ թե ջրով կամ միայն գինով, այլ գինով եւ ջրով միասին: Նույն այս տեսակետն են պաշտպանում նաեւ Գրիգոր Անավարզեցին եւ Սսի ժողովականները, որոնք ընտրել էին խոտոր ճանապարհ՝ հեռանալով մեր հայրերի ուղղափառ հավատքի դավանությունից: *«Եւ բաժակ ոչ անապականն գինւոյ անուն է, այլ ամանոյն, յորում խառնի ջուրն եւ գինին»*,- գրում է Անավարզեցի կաթողիկոսը («Էջմիածին», 1974, Ժ, էջ 49): Նույն աստվածաբանական մտածումն ենք տեսնում նաեւ 1307 թ. Սսի ժողովում ընդունված սահմանադրության մեջ (Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս..., էջ 276): Սակայն ի տարբերություն վերոգրյալի՝ մեր Եկեղեցու ուղղափառ վարդապետության ջատագով հայրերը պնդում են, որ «բաժակն» այստեղ անապակ գինու անունն է:

*Շարունակությունը՝ էջ 7*

---

# ՇԵՆՈՒԴԱ Գ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

## ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՍ Ա

*Սկիզբը՝ 2004-ի թիվ 23-24, 2005-ի թիվ 1*

### ԳԼՈՒԽ Բ
### ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ՀԱՅՐ ԱՍՏԾՈ ՈՐԴԻՆ Է

**Տեր Հիսուս Քրիստոսն Աստծո Միածին Որդին է**

Տերը կոչվում է Աստծո Միածին Որդի՝ տարբերվելու համար Աստծո մնացյալ զավակներից, ովքեր նույնպես որդիներ են կոչվում սիրո, հավատի եւ որդեգրության շնորհիվ: Նա Միածին Որդին է, ով ունի Աստծո նույն բնությունը, էությունն ու աստվածությունը: Տերը «Միածին Որդի» է կոչվում հետեւյալ տեղիներում.

ա) Հովհ. Ա 18 - «Աստծուն ոչ ոք չի տեսել երբեք: Բայց Միածին Որդին, որ Հոր ծոցում է, Նա պատմեց»:

Սա նշանակում է, որ Որդին, մարմնանալու արդյունքում տեսանելի դառնալով, հայտնեց մեզ Աստծուն եւ Նրան ճանաչել տվեց, քանի որ Հայրն Ինքն անտեսանելի է Իր աստվածությամբ: Ահա թե ինչու Տերն ասաց Իր աշակերտ Փիլիպպոսին. «Ով տեսավ Ինձ, տեսավ Հորը. ուրեմն դու ինչպե՞ս ես ասում՝ ցո՛ւյց տուր մեզ Հորը» (Հովհ. ԺԴ 9):

բ) Հովհ. Գ 16 - «Քանզի Աստված այնպես սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ամեն ոք, որ հավատում է Նրան, չկորչի, այլ հավիտենական կյանքն ընդունի»:

գ) Հովհ. Գ 18 - «Ով հավատում է Նրան, չի դատապարտվի, իսկ ով չի հավատում Նրան, արդեն իսկ դատապարտված է, որովհետեւ չհավատաց Աստծո Միածին Որդու անվանը»:

Ուրեմն, եթե Միածին Որդուն հավատալը հավիտենական կյանք է շնորհում եւ դատապարտությունից ազատում (պայմանով, որ հավատացող անձն այսպիսի հավատին համապատասխան վարք ունենա), ապա սա Նրա Աստվածության ապացույց է:

դ) Ա Հովհ. Դ 9 - «Սրանո՛վ երեւաց Աստծո սերը մեր հանդեպ. որ Աստված Իր Միածին Որդուն ուղարկեց աշխարհ, որպեսզի Նրանով ապրենք»: Անշուշտ չենք կարող Նրանով ապրել, եթե Նա Աստված չէ, որովհետեւ Աստվա՛ծ է կյանքի աղբյուրը:

ե) Հովհ. Ա 14 - Ս. Հովհաննեսը, խոսելով այն փառքի մասին, որ վայել է Քրիստոսին իբրեւ Աստծո Որդու, ասում է. «Եվ Խոսքը մարմին դարձավ եւ բնակվեց մեր մեջ, եւ տեսանք Նրա փառքը, փառքն իբրեւ Հոր Միածնի, լի շնորհով եւ ճշմարտությամբ»:

Սրանք սուրբգրային հինգ խոսքեր են, որ ներկայացնում են Տեր Քրիստոսին իբրեւ Հոր Միածին Որդի՝ զատված մարդկության մնացյալ մասից: Ինչ վերաբերում է Որդու աստվածությանը, սրա համար բավական են այն տեղիները, որոնք ցույց են տալիս, որ՝

- Նա կյանքի աղբյուրն է:
- Նրանով կարելի է ձեռք բերել հավիտենական կյանքը:
- Նրան հավատալը փրկում է կործանումից ու դատապարտությունից, մինչ չհավատալը դատապարտության արժանացնում:
- Նա ունի Աստծո Միածին Որդուն վայել փառքը:



### ԳԼՈՒԽ Գ
### ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՎ ՀՈՐ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Որդու եւ Հոր միջեւ եղած հարաբերությունը եւս ապացուցում է Որդու աստվածությունը: Այս հարաբերությունը մեծավ մասամբ հայտարարվում է հենց Տեր Հիսուսի կողմից. Նրա որոշ հայտարարությունների ժամանակ հրեաները ցանկացան սպանել Նրան: Ստորեւ մենք քննության կառնենք Հոր եւ Որդու միջեւ այս հարաբերության գլխավոր հատկանիշները:

1. *Որդին Խոսքն է (Բանը՝ Լոգոսը)*

Նրա Խոսք լինելն աներկբայորեն ցույց է տալիս Նրա աստվածությունը, որովհետեւ Աստված եւ Նրա Խոսքը մեկ բան են: Այլեւ ասված է, որ Տեր Հիսուս Քրիստոսն Աստծո զորությունն ու իմաստությունն է (Ա Կոր. Ա 24): Այս ամենը ցույց է տալիս, որ Նա Աստծո Որդին կամ Միածին Որդին է, ինչպես արդեն խոսվել է:

2. *Տեր Հիսուսի «Ես եւ Հայրը մեկ ենք» (Հովհ. Ժ 30) հայտարարությունը*

Հրեաները, այս հայտարարությունը ճիշտ հասկանալով, որ նշանակում է Նրա աստվածությունը, քարեր վերցրին՝ Նրան քարկոծելու, եւ երբ Նա հարցրեց սրա պատճառը, պատասխանեցին. «Հայհոյության համար, եւ որ Դու մարդ ես, սակայն Քեզ Աստված ես դարձնում» (Հովհ. Ժ 31-33):

Հոր հետ մեկ լինելու փաստը Տեր Քրիստոսի կողմից շարունակ նշվում է Հորն ուղղված Նրա երկար մենախոսության մեջ, ուր Նա Հորն ասում է առաքյալների մասին. «Սո՛ւրբ Հայր, Քո անունով պահի՛ր նրանց, որոնց տվեցիր Ինձ, որ մեկ լինեն, ինչպես Մենք ենք մեկ» (Հովհ. ԺԷ 11): Նա նույն բառերը կրկնում է նաեւ 22-րդ համարում. «...որպեսզի մեկ լինեն, ինչպես Մենք ենք մեկ», այսինքն՝ որպեսզի լինեն մեկ Եկեղեցի եւ մեկ միտք, ինչպես Մենք ենք մեկ աստվածություն եւ մեկ բնություն:

*Շարունակությունը՝ էջ 8*

# Աղքատորդու կյանքը ծնունդից ի վեր ողորմության գործերով պտղավորվելու ասպարեզ է

## Մեր հյուրն է Մայր Աթոռի Արխիվի տնօրեն արժանապատիվ Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը

**- Տե՛ր հայր, մեր Տեր Հիսուս Քրիստոս ինը երանիների շարքում երանության է արժանացնում նաեւ ողորմածներին: Ինչո՞ւ է Տերը երանի տալիս ողորմածներին: Ովքե՞ր են ողորմածները:**

- Այո՛, Աստված երանիների շարքում երանության է արժանացնում նաեւ ողորմածներին, նրանց, ովքեր իրենց կյանքի ընթացքում յուրյանց անձերը զարդարում են ողորմության գործերով: Բնական է, որ Տեր Աստված երանի է տալիս ողորմածներին, որովհետեւ Տիրոջ շնորհընկալ զավակները՝ եկեղեցական սուրբ հայրերը, անդրադառնալով առաքինություններից ողորմությանը, վկայում են, որ աստվածնմանությունը մարդու կյանքում առավելապես իրականություն է, երբ մարդը ծաղկում է ողորմությամբ ու պտղավորվում ողորմածությամբ՝ կենսագործելով ավետարանական պատվիրանը: Հետեւապես, այդ առաքինությունը, որ մարդու մեջ ցոլացնում է աստվածնմանությունը, բնականաբար, Տերը որակում է երանական, ուստի այդ առաքինության առաքինական գործերով պսակյալն էլ՝ ողորմածը, պիտի արժանանա Տիրոջ երանությանը:

... Տեր Աստված Ինքը երկայնամիտ է ու ամենողորմ, հետեւաբար, Իր արարածներից եւս ակնկալում է ողորմության գործեր՝ արյունակիցների, հավատակիցների, հայրենակիցների, օտարականների, անտունների, աղքատների, սովյալների, մերկերի, միով բանիվ՝ բոլոր մերձավորների, նրանց հանդեպ, ովքեր նյութականի, հոգեւոր խոսքի, խրատի, խորհրդի, մխիթարության, բարի եւ քաղցր վերաբերմունքի կարիքն ունեն:

**- Տե՛ր հայր, գիտենք, որ աղոթքը, պահքն ու ողորմությունը մաս են կազմում ապաշխարության խորհրդի: Ինչո՞ւ է ողորմությունն ավելի բարձր դասվում աղոթքից ու պահքից: Սուրբ Հակոբոս առաքյալը եւս փաստում է, որ «ողորմածությունը բարձրագլուխ պարծենում է Դատաստանի դիմաց»:**

- Սուրբ Եկեղեցու վարդապետները, անդրադառնալով Լեռան քարոզին, մասնավորաբար երանիներին, շեշտելով ասում են, որ թեեւ դրանցից յուրաքանչյուրն իր առանձնահատուկ նշանակությունն ունի քրիստոնյայի հոգեւոր կյանքում, սակայն, միեւնույն ժամանակ, շաղկապված են մեկը մյուսին: Արդ, ողորմության երանին էլ, լինելով հինգերորդը՝ երանիների շարքում, սերտորեն առնչված է մյուս երանիների հետ, հետեւաբար, այն իր մեջ ամենաուղղակի կերպով պարունակում է նաեւ քրիստոնեական առաքինություններից աղոթքն ու պահքը: Հիրավի, երբ մենք ողորմություն ենք գործում՝ կամավորաբար ինչ-որ զոհողություն ենք անում, պատարագ եւ կամ ընծա մատուցում, իսկ զոհողությունն ու ընծան էլ պահքի ու աղոթքի կարեւորագույն հանգամանքներից են: Ինչպես նաեւ, երբ մենք ողորմած ենք, գթասրտություն ենք ցուցաբերում եւ կարեկից ենք ինչ-որ մեկի հանդեպ, ապա այդպես մենք նախ եւ առաջ մեր ազնիվ ու անկեղծ ցանկությունն ենք որպես անբարբառ աղոթք առ Աստված ընծայելով առաքում եւ ապա շոշափելի, առարկայական օգնության ձեռք մեկնում: Այս ամենից զատ, երբ մենք ողորմությամբ զոհողություն, նվիրատվություն ենք կատարում՝ նա, ով ստանում է այդ նվերը, օգնությունն ու աջակցությունը, նա ինքն էլ, իր հերթին, երախտագիտության զգացումով իր մաղթանաց աղոթքն է վերառաքում Երկինք՝ վասն ողորմած անձի կենաց արեւշատության՝ աստվածային ողորմություն հայցելով: Ահա թե ինչու ողորմությունը բարձրագույն է: Միով բանիվ, այս առաքինության մեջ ներառված են թե՛ աղոթքը, թե՛ պահքը, եւ երբ հավատացյալը ողորմություն է գործում, ապա նա դառնում է ոչ միայն ողորմած ու բարեգործ, այլեւ աղոթասաց ու պահեցող: Ի վերջո, ողորմությամբ մենք պատճառ ենք հանդիսանում, որ Եկեղեցին՝ այս պարագայում ողորմության ենթակաները, մեզ համար մուտք գործեն աղոթքի ու պահքի ասպարեզ: Ահա թե ինչու թե՛ Աստվածաշունչ մատյանում, թե՛ հայրաբանական ժառանգության մեջ ողորմությունը նմանեցվում է մի դշխոյի, ով Ահեղ Դատաստանի օրը գալով՝ պիտի բազմի Անաչառ Դատավորի աջակողմը եւ բարեխոսի բոլոր ողորմած անձանց համար. «Ողորմութիւն իբր զիարսն եւ զդշխոյ է Երկնաւոր Թագաւորին, եւ բազմի ընդաջմէ Քրիստոսի, եւ ի մէջ ամենայն բազմութեան, ի մէջի Ատենին, ճանաչէ զողորմածն իւր եւ առ ինքն ձգէ եւ կացուցանէ ընդաջմէ Քրիստոսի՝ բաց երեսօք եւ ուրախ սրտիւ» (սուրբ Գրիգոր Տաթեւացի):



...Ողորմությունը Տիրոջ կողմից առավել ցանկալի է, քանզի Աստված հենց Ինքն է վկայելով ասում. «Քանզի ողորմություն եմ ցանկանում եւ ոչ թե զոհաբերում» (Օսեե. Զ 6):

**- Կարո՞ղ ենք ասել, որ կարոտյալների, նեղյալների նկատմամբ ողորմած գտնվելով՝ մարդը հատուցում է Աստծու հանդեպ իր ունեցվածքի պարտքը, եւ մարմնավոր բարիքներն էլ, որ Աստված է պարգեւել, փաստորեն միջոց են հանդիսանում հոգեւորը ձեռք բերելու համար:**

- Այո՛: Մարդուս կյանքում Աստված է, որ մեզ շնորհում է ամենայն բարիք՝ լինի նյութական թե հոգեւոր, սակայն պիտի գիտակցենք, որ Աստված չի գալիս ու անմիջապես մեզ պարգեւներ կամ բարիքներ բաշխում: Տիրոջ օրհնությամբ մենք ենք, որ մեր աստվածապարգեւ զորությամբ ու կարողությամբ, ճիգ ու ջանք ի գործ դնելով, աշխատելով ու տքնելով ստեղծում, արարում, վաստակում ու վայելում ենք, եւ այդ ամենն աստվածային ձրի պարգեւ է: Հետեւապես, երբ մենք մեր արդար վաստակից, շահածից ողորմություն ենք անում, մաս ու բաժին տալիս նրանց, ովքեր դրա կարիքն ունեն, արդարեւ, մեր արդար վաստակից պատվում ենք մեր երկնավոր Տիրոջը, քանզի Քրիստոս Աստված վկայելով ասում է. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ Իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ՝ Ի՛նձ համար արեցիք» (Մատթ. ԻԵ 40): Ողորմության գործերով ապրելիս, արդար է, որ ողորմած անձն էլ ակնկալի աստվածային ողորմություն: Քանզի Աստված մեզ փոխ է տվել Իր բարիքները, որպեսզի մենք էլ այդ բարիքները շնորհենք միմյանց եւ այդպես երկնային հարկերում մեզ համար օթեւաններ նախապատրաստենք: Ի վերջո, միշտ հիշենք սուրբգրային ճշմարտություններից հետեւյալ երկուսը. «Աղքատին ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն, եւ ըստ նրա տվածի էլ Աստված պիտի հատուցի նրան» (Առակ. ԺԹ 17), այլեւ «Երանի՜ ողորմածներին, որովհետեւ նրանք ողորմություն պիտի գտնեն» (Մատթ. Ե 7):

*Շարունակությունը՝ էջ 8*

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# Դասական եւ ժամանակակից հայ գրականության գրականագիտական յուրացումը



*Սկիզբը՝ էջ 4*

Նոր շրջանի գրականությունը, անտարակույս, համեմատաբար լավ է ուսումնասիրված, բայց այս ասպարեզում էլ կան բավականին բաց էջեր, եւ որ կարեւորն է, այդ շրջանի գրականությունը եւս կարիք ունի արդիական հայացքի ու վերագնահատումների՝ հիմք ունենալով գեղարվեստական արժեքների արդիական համակարգը: Այս տեսակետից կարող եմ առանձնացնել մի քանի աշխատություններ, որոնց հանդեպ ունեմ նաեւ որոշ վերապահություններ:

Բացի դա, կան առանցքային հեղինակներ, որոնց երկերի գիտական հրատարակությունը սպասում է իրականացման: Օրինակ՝ Շիրվանզադեն, Մուրացանը, Նար-Դոսը եւ ուրիշներ: Մի ամբողջ բաց տարածություն է ներկայացնում հայ նոր գրականության ձեւավորման սկիզբը: Խոսքս առավել չափով վերաբերում է հայկական կլասիցիզմի գրականությանը: Այդ բացը լրացնելու նպատակով կարելի է «Գրական հուշարձաններ» մատենաշարի տեսքով հրատարակել հայ կլասիցիստների՝ Խաչատուր Էրզրումցու, Էդուարդ Հյուրմյուզյանի, Պետրոս Մինասյանի, Հովհան Վանանդեցու, Արսեն Բագրատունու եւ էլի մի քանիսի երկերը: Նույն բախտին է սպասում նաեւ հայ հուշագրական արձակը՝ հանձինս Հովսեփ Էմինի եւ Հարություն Արարատյանի: Առ այսօր մենք չունենք նաեւ 19-րդ դարի հայ հանրային եւ գրական մտքի մեջ այնպիսի կարեւորագույն դեր կատարած մի հեղինակի երկերի հավաքածու, ինչպիսին Գրիգոր Արծրունին է: Չունենք Ղ. Ալիշանի երկերի ամբողջական հրատարակությունը:

Գոնե մեկ անգամ ամբողջացվելու եւ վերահրատարակվելու պահանջ ունեն նաեւ երկրորդական համարվող այնպիսի գրողների երկեր, ինչպիսիք են Գաբրիել Պատկանյանը եւ համանման այլ հեղինակներ:

Այս ամենով՝ նոր շրջանի հայ գրականության ուսումնասիրությունը ժամանակակից հայ գրականագիտության ամենագործուն բնագավառներից մեկն է եւ կենդանի ներկայություն ունի մեր հոգեւոր-մշակութային կյանքում, ինչը նշանակում է այդ շրջանի գրականության մասնակցություն գործող գրական ընթացքին:

**Նորագույն շրջան:** Առավել լուրջ ներկայացման անհրաժեշտություն է զգում նորագույն շրջանի գրականությունը: Թեեւ այս շրջանը նախկինում ենթարկվում էինք խորհրդահայ եւ սփյուռքահայ բաժանումների, ինչը հիմնավորված էր պատմաքաղաքական իրավիճակով, հիմա, կարծում եմ, թե՛ Հայաստանի, թե՛ Սփյուռքի գրականությունները պետք է դիտենք միասնությամբ՝ որպես նորագույն շրջանի հայ գրականություն, ներքին յուրահատկությունների պահպանմամբ եւ բացահայտմամբ: Այդպես չառաջնորդվելու դեպքում 19-րդ դարի հայ գրականությունը ստիպված պետք է լինենք դիտել որպես արտերկրի գրականություն՝ գաղութային կասենք թե տարաշխարհիկ, նույնն է. հապա մտաբերենք 19-րդ դարի հայ գրականության քարտեզը՝ Վենետիկ, Վիեննա, Մոսկվա, Մադրաս, Կալկաթա, Կոստանդնուպոլիս, Թիֆլիս, որոնցից վերջին երկուսը, բնականաբար, այլ իմաստ ունեն մեզ համար՝ որպես արեւմտահայ եւ արեւելահայ մտավոր կյանքի կենտրոններ: 19-րդ դարի գրականությունը մենք դիտում ենք միասնաբար՝ որպես նոր շրջանի հայ գրականություն՝ իր տեղային յուրահատկություններով, եւ ճիշտ ենք անում: Այդպես պետք է վարվենք նաեւ նորագույն շրջանի հայ գրականության հետ՝ գեղարվեստական ամբողջ ընթացքը դիտենք միասնաբար, բայց եւ ներքին բոլոր յուրահատկությունների առանձնացումով ու վերլուծությամբ: Հակառակ դեպքում սփյուռքահայ գրականությունն էլ իր հերթին շատ է տարանջատված՝ նկատի ունենալով աշխարհագրական գործոնը եւ տեղային յուրահատկությունները: Մեկ ազգ՝ մեկ գրականություն կարգախոսը պետք է գործի նաեւ այս հարցում: Բացի դա, սահմանների վերաբացումից, քաղաքական առճակատման վերացումից, կապի ու տարածական խզվածության հաղթահարումից, հայրենիքում՝ արեւմտահայերենի, արտերկրում՝ արեւելահայերենի գործուն դերի ուժեղացումից, հաճախակի փոխայցելություններից, եւ համանման այլ իրողություններից հետո Սփյուռք հասկացությունն աստիճանաբար դառնում է պայմանական գործոն: Պատահական չէ, որ Սփյուռքի շատ գրողներ Հայաստանի գրողների միության անդամների շարքում են: Կարծում եմ, որ սփյուռքահայ գրականություն հասկացությունն աստիճանաբար վերանալու է՝ կարեւորվելով օտարագիր հայ գրողների հանդեպ որոշակի տեսական եւ գործնական մոտեցումների մշակումը:

Հիմա, մեկ ազգ՝ մեկ գրականություն միասնության ելակետային դիրքերից էլ նայենք նորագույն շրջանի հայ գրականության համապատկերին:

Ե. Չարենցի ժառանգությունը համեմատաբար լավ է ուսումնասիրված: Այդուամենայնիվ, հետազոտական արդյունավետ աշխատանքները շարունակվում են: Ժամանակն է Չարենցի երկերի նոր, հնարավորինս ամբողջական գիտական հրատարակության իրականացումը, որի հիմքը կարող են կազմել նախկին հրատարակությունները, հատկապես՝ «Երկերի ժողովածուի» վեցհատորյակը (1962-1968), «Անտիպ եւ չհավաքված երկերը» (1983) եւ «Նորահայտ էջերը» (1926): Այստեղ շատ բան կա վերանայելու, վերաճշտելու եւ լրացնելու, բայց դա չպետք է խոչընդոտի իրականացնելու գլխավոր նպատակը:

*Շարունակելի*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր***

## ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

# ԽՈՒՆԿ ՍԻՐՈ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

*«Մշակ, ցանէ՛, հանուն Տիրոջ նշխարին,*
*Թող մանուերէդ հողին սերմեր լուսեղէն,*
*Վաղը ամէն մէկ հասկի մէջ կաթնային*
*Պիտ՛ հասուննա մաս մ՛Հիսուսի մարմինէն»:*
*Դանիել Վարուժան*

*Օրերս Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհի Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը պարգեւատրվեց հայ ժողովրդի բարեկամ եւ մեծ մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենի անվան ոսկե մեդալով: Սա գնահատումն է սրբազան հոր՝ Գուգարաց թեմում իրականացրած բազում եկեղեցաշեն իրագործումների:*

*Սրբազան հայրը, ծնունդով լինելով Արեւմտյան Հայաստանի Մալաթիա քաղաքից, անմիջական ժառանգն ու կրողն է Մեծ Եղեռնի նահատակ Չուլջյան գերդաստանի եւ պաշտպանը հայոց մեծ դատի:*

*Ոսկե մեդալը նրան հանձնեց «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամի նախագահ տիար Ֆելիքս Բախչինյանը՝ թեմի առաջնորդարանում: Հանդիսավոր արարողությանը ներկա էր թեմի հոգեւոր դասը:*

*Իսկ հունվարի 17-ին առաջնորդարանում տեղի ունեցավ թեմի հոգեւոր հովիվների ժողով՝ նախագահությամբ սրբազան հոր: Մասնավորապես քննարկվեցին Լոռու մարզի հանրակրթական դպրոցներում Հայ եկեղեցու պատմություն առարկայի դասավանդման ընթացքի, ուսուցիչների վերապատրաստման, եկեղեցական եւ ազգային տոները պատշաճ մակարդակով անցկացնելու հետ կապված հարցերն ու խնդիրները:*

Հայոց բանաստեղծական այգեստանի միջից ահա պտուղներ հավաքող եւ նրանց սերմերը քրիստոսասեր հոտին բաշխող մշակ ենք տեսնում Անատոլիայի ափերը մանկությունից թողած եւ Հայոց հողում բնակություն հաստատած գերաշնորհի տեր Սեպուհ եպս. Չուլջյանին:

Երեւի թե դեռ Պոլսի Ներսիսյան վարժարանում սրբակենցաղ Շնորհք պատրիարքի ոգով պարուրված նրա մանուկ հոգին նախապատրաստվել էր մտնելու հոգեւոր այն շավիղը, որն այսօր արդեն քրիստոնեական գործունեության մի լայն ասպարեզ է դարձել նրա համար:

Գյումրիում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Հայկ Չուլջյանն իր կրթությունը շարունակում է Գեւորգյան հոգեւոր ճեմարանում: Բարեշնորհ Հայկ սարկավագը, մեծ պատասխանատվությամբ պաշտպանելով ավարտաճառը, ծառայության է անցնում Վեհարանում: Երջանկահիշատակ Վազգեն Առաջին Կաթողիկոսը, նկատելով իր ժրաջան միաբանին, իրար հաջորդող կարեւոր պաշտոնների է կոչում նրան նախ Վեհարանում, ապա 1987 թ. (կուսակրոն քահանա ձեռնադրվելուց անմիջապես հետո) Գեւորգյան հոգեւոր ճեմարանում՝ որպես փոխտեսուչ, այնուհետեւ նշանակում Ժնեւ քաղաքի հայ համայնքի հոգեւոր հովիվ:

Իսկ տարիներն անհանգիստ էին...

Հայոց հողն ավելի ու ավելի էր տրոփում իր անկախությանը տեր կանգնելու ձգտումների ուժգնությունից: Զգացվում էր հոգեւոր սպասավորների խիստ կարիք: Սեպուհ վարդապետը կրկին հրավիրվում է Մայր Աթոռ եւ նշանակվում Շիրակի թեմի փոխառաջնորդ: Երկրաշարժի այդ ծանր օրերին այս նոր նշանակումը Վազգեն Վեհափառի նպատակային ու հետեւողական քայլերից մեկն էր, որով հայր սուրբն իր նվիրումով ու ծառայությամբ դառնալու էր մասնակիցը աղետի գոտում իրականացվող եկեղեցաշինական, կազմակերպչական, մարդասիրական զանազան աշխատանքների:

Վեհափառի հեռատես կադրային գործունեության արդյունքում 1996 թ. Սեպուհ վարդապետը նշանակվում է Գուգարաց թեմի առաջնորդ, ուր եւ շարունակում է հայարժան սպասավորի իր գործունեությունը՝ 1997-ից արդեն եպիսկոպոսական գավազանով:

Գուգարաց թեմը, իրավամբ, ունեցել է անհրաժեշտությունը հավատաշեն հոգեւոր հովվի եւ այսօր Սեպուհ սրբազանի անդուլ աշխատասիրության ու նվիրումի շնորհիվ, որպես հոգեւոր եւ վարչական կառույց, արդեն կայացել է:



Սրբազանը, նկատելով, որ հայոց հանրային կյանքը տարուբերվում է անորոշությունից, օտարամոլությունից եւ աղանդավորության սանձարձակ արշավանքներից, առավել նախանձախնդրությամբ լծվեց ապագա սերնդի մեջ Եկեղեցու եւ հայրենիքի նկատմամբ սերն ու հավատքը զորացնելու ազնիվ գործին: Եվ իրեն բնորոշ պահանջկոտությամբ իր առջեւ խնդիր դրեց. «Եթե քո երկրի ներկա վիճակը քեզ չի գոհացնում, ու մտահոգ ես ապագայի համար, ուրեմն պատրաստիր կրթյալ եւ հայրենասեր սերունդ»: Եվ ահա 1997 թ., Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Վանաձորում բացվեց կրոնի ուսուցիչների պատրաստման երկամյա դասընթաց: Զուգահեռաբար կիրակնօրյա դպրոցներ բացվեցին թեմի մի շարք համայնքներում: Այս ընթացքում թեմի հանրակրթական դպրոցների համար իբրեւ ուղեցույց տպագրվեց եւ բաժանվեց «Քրիստոնեական» գրքույկը՝ 18000 տպաքանակով: Տպագրվեց «Ուխտավորի ուղեցույցը» (3000 օրինակ), փոքրիկ մի աղոթագիրք (10000 օրինակ) եւ «Հոգեւոր մշակույթի նվիրյալներ» գիրքը (5000 օրինակ)՝ նախատեսված Հայ եկեղեցու պատմության, գրականության ուսուցիչների եւ հանրակրթական դպրոցի բարձր դասարանցիների համար՝ որպես ուսումնական օժանդակ գրականություն:

1999 թ. սկսած Հայ եկեղեցու պատմությունը՝ իբրեւ պարտադիր առարկա, դասավանդվեց Վանաձորի բոլոր հանրակրթական դպրոցներում, ինչպես նաեւ թեմի այն ծուխերում, ուր հոգեւոր հովիվներ կան:

Այս տարիներին թեմում բարեգործական եւ քարոզչական բազմաթիվ ծրագրեր են իրականացվել, հատկապես՝ դպրոցների, հաշմանդամ երեխաների, ծերանոցի, մանկատան եւ կարիքավոր անհատ քաղաքացիների, ուսանողների համար:

Իր ծավալով եւ շարունակականությամբ հիշատակության է արժանի Գուգարաց եւ Կանադայի թեմերի համատեղ ջանքերով ամենամսյա դրամական օգնության բաշխումը Սպիտակի երկրաշարժից տուժած եւ ծնողազուրկ 196 (1991 թ. մինչ այսօր), ինչպես նաեւ Օձուն եւ Սանահին համայնքների 96 ծնողազուրկ երեխաներին (2001 թ.սկսած): 2001-2004 թթ. Վանաձորում, Ալավերդիում, Ստեփանավանում եւ Սպիտակում կազմակերպվել են բակային ճամբարներ՝ շուրջ 750 երեխայի համար:

2002 թ. հունիսի 15-ից գործում է նաեւ «Ծիծեռնակ» ամառային մանկական ճամբարը, որտեղ 2002-2004 թթ. ընթացքում անհատույց հանգստացել են շուրջ 3000 ծնողազուրկ եւ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ:

Սրբազան հոր գործունեության մեջ մեծապես կարեւորվում է նաեւ եկեղեցաշինությունը: 1996 թվականից ի վեր բարերարներ փնտրելով, ճարտարապետներին ու շինարարներին ուղղություն ցույց տալով, հաճախ նաեւ շինարարի պարտավորությունները ստանձնելով՝ կարճ ժամանակահատվածում սրբազանը կարողացավ իրականացնել տասնյակ եկեղեցիների կառուցման եւ վերանորոգման աշխատանքները: Տաշիրի Ս. Սարգիս, Գոգարան գյուղի Ս. Աստվածածին, Սպիտակի Ս. Հարություն, Իջեւանի Ս.Ներսես Շնորհալի, Դսեղի Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ոսկեպարի Ս. Սարգիս եկեղեցիները, Արդվի գյուղի Ս. Հովհաննես Օձնեցի դամբարան-մատուռը, Սանահինի վանքի վերանորոգված գրադարանը, Սպիտակի շրջանի Ս. Գեւորգ, Արեւաշողի Ս. Աստվածածին, Ալավերդու Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցիները, Շենավան գյուղի Ս. Ամենափրկիչ մատուռը, Ոսկեւանի Ս. Գայանե, Մարգահովտի Ս. Գրիգոր Լուսավորիչ վերակառուցված եկեղեցիները, Վանաձորի Ս. Սարգիս եկեղեցին եւ դեռեւս շինարարության ընթացքում գտնվող այլ իրագործումներ:

Սրանք շատերի համար եկեղեցաշինական, բարեգործական տարբեր ծրագրերի մեջ ընդգրկված գործունեության արդյունքներ կարող են համարվել, սակայն Սեպուհ սրբազանի համար նրանցից յուրաքանչյուրն առանձին սիրո, նվիրաբերումի սրբավայր է, որոնց անունները նա երկյուղածորեն է առնում իր շուրթերին:

Վանաձորում առանձնահատուկ ոգեւորությամբ են խոսում սրբազանի նախաձեռնությամբ վերանորոգված ու փլուզումից փրկված՝ քաղաքի պատմական հուշարձաններից մեկի՝ առաջնորդարանի շենքի վերակառուցման, Հաղպատի վանատան նորոգման, ինչպես նաեւ «Ծիծեռնակ» եւ «Կռունկ» մանկական ճամբարների ստեղծման աշխատանքների մասին:

Գուգարաց թեմի առաջնորդն ու ճշմարիտ հայորդին, իսկապես, Տիրոջ արտի մեջ ծառայող այն մշակներից է, որի ցանած արտի մեջ՝

*«Վաղը ամէն մէկ հասկի մէջ կաթնային*
*Պիտ՛ հասուննա մաս մ՛Հիսուսի մարմինէն»:*

Վարձքդ կատար, սրբազա՛ն հայր:

**Ֆելիքս ԲԱԽՉԻՆՅԱՆ**

# ԱՆԱՊԱԿ ԲԱԺԱԿԻ

## ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՆԴԱՍՏԱՆՈՒՄ

*Սկիզբը՝ էջ 5*

*«Ո՛վ դուք, որ զայդ ասէք եւ ոչ պատկառէք. յորժամ ասէ՝ «քանիցս անգամ թէ ըմպիցէք զբաժակս», միթէ զամա՞նն ասաց ըմպել, եւ ո՛վ ի մարդկանէ զպնակ կամ զգուշ կամ զսկիհ էարբ: Տեսանէ՞ք թէ անզգուշութիւնդ ուր տանի զձեզ հանէ: Հոմանուն է բաժակն, զի եւ զչարչարանսն բաժակ ասէ. «կարէ՞ք ըմպել զբաժակն, զոր ես ըմպելոց եմ», ասաց Տէրն»,-* գրում է Մովսես վարդապետը (Աբէլ քահանայ Օղլուգեան, նշվ. աշխ., էջ 111): Ինչպես տեսնում ենք, Մովսես վարդապետը ոչ միայն հանդիմանում է ընդդիմադիրներին՝ ասելով, որ «բաժակն» այստեղ գինու անունն է, այլեւ Ս. Գրքի հիման վրա բերում է բաժակ-չարչարանքներ զուգահեռը: Վերջինիս համար իբրեւ զորավոր հակափաստարկ վկայակոչում է ավետարանիչների խոսքերը, որ Հիսուս վերցրեց բաժակը, գոհություն հայտնեց, տվեց աշակերտներին եւ ասաց, որ բոլորը խմեն դրանից, որովհետեւ իր արյունն է (նույն տեղում, էջ 150): Հետեւաբար բաժակ ասելով՝ նրանք նկատի ունեին ոչ թե բաժակը, այլ նրա պարունակած անապակ գինին: Ապացուցելու համար, որ բաժակն իրապես գինու անունն է, մեջբերում է նաեւ Ս. Պատարագի ժամանակ պատարագիչ հոգեւորականի կողմից ասվող մի հատված. *«...եւ զբաժակս օրհնեալ արիւն ստուգապէս արասցես Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»*: Այնուհետ եռամեծ վարդապետն ընդդիմանում է հակառակորդներին՝ ասելով. *«Միթէ զամա՞նն ասէ զայս, ո՛վ չարափառ դու, որ շաղակրատես, թէ բաժակ ամանոյն ասէ»* (Նույն տեղում, էջ 152: Նա նաեւ Պատարագամատույցից այլ տեղիներ է վկայակոչում՝ ապացուցելու համար Հայ Եկեղեցու տեսակետի ճշմարտացիությունը): Այս մասին նաեւ դատողություններ է կատարում ս. Գրիգոր Տաթեւացին: Նա իր «Մեկնութիւն Յոհաննու Աւետարանին» գործում գրում է. *«Զի թէ ասեն բաժակ անունն անարբոյ է եւ ոչ գինւոյ, վասն այսր գիտելի է, զի թէ անարբոյն էր անուն,*



*ապա ուրեմն ոչ գիտեմք զինչ կայր յանարբն յայն՝ կաթն, թէ՝ մեղր, թէ՝ ջուր, զի յետ բաժակին ոչ այլ ինչ անուանեաց՝ գինի կամ ջուր, իսկ զանարբն դատարկ զիա՞րդ ըմպել տայր մեզ, ապա ուրեմն յայտ է, զի բաժակն աստ վասն գինւոյն ասաց, որ էր անապական»* (Վահան սրկ. Զաքարյան, նշվ. աշխ.): Հետաքրքրական է, որ բաժակ-անապակ գինի զուգահեռն է տանում նաեւ Հ. Գաբրիել Ավետիքյանը՝ Պողոսի թղթոց իր մեկնության մեջ: Նա, մեկնելով Ա Կորնթ. ԺԱ 25 համարը, նշում է, որ Քրիստոս *«առ նաեւ զբաժակ լցեալ գինւով»* (Մեկնութիւն չորեքտասան թղթոց երանելոյն Պօղոսի առաքելոյ: Արարեալ ըստ ողջամիտ շաւղաց վարդապետաց եկեղեցւոյ, ընտրութեամբ հարազատ բնագրի հայկական թարգմանութեան, հանդերձ բացաբեռնութեամբ այլոց թարգմանութեանց: Աշխատասիրութեամբ Տն. Հ. Գաբրիէլի Աբոռակալ վարդապետի Աւետիքեան կոստանդնուպօլսեցւոյ, յաշակերտութենէ նախապատիւ Աբբայի Տեառն Մխիթարայ Րաբունապետի, հ. Ա, Վէնէտիկ, 1806, էջ 889: Հայր սուրբը նախորդ էջերում էլ նշում է, որ Քրիստոս բաղարջ հաց վերցրեց, նույն տեղում, էջ 886):

*Շարունակելի*

**Տիգրան սրկ. ԲԱՂՈՒՄՅԱՆ**

Գեւորգ Ձ Ամենայն Հայոց Կաթողիկոս

# ՀՐԱՇՔԻ ՏԵ՛ՆՉ, ԹԷ՛ ՀԱՒԱՏ

## անտիպ քարոզներից

Սկիզբը՝ էջ 4



### Բ. Հրաշափին հաւատ

Շատ ուղիղ է ասել Գեօթէն, թէ հրաշքը հաւատի զաւակն է. այո՛, հաւատն է հրաշք ծնում. ժողովրդի կե՜նդանի հաւատը անկարելին կարելի է դարձնում, որովհետեւ ժողովրդական հաւատը հրաշք է՛ւ ընդունում է, է՛ւ ստեղծում:

Մի՞թէ հրաշք չէ, երբ հաւատացեալ մարդը, յանուն իր ներքին համոզման, հրաժարւում է այս գեղեցիկ աշխարհից եւ կախաղան բարձրանում. մի՞թէ հրաշքներ չեն մեր եկեղեցական նախատակների եւ մարտիրոսների՝ յանուն հաւատի արիւն թափելը:

Այո՛, անբացատրելի հրաշքներ են եւ հրաշքներ էլ կմնան: Ահա այդ ներքին համոզման ծնունդ հաւատն է, որ այնքա՜ն զօրաւոր է մարդու մէջ եւ որ առանց դժուարութեան իր անձը Աստծուն, կրօնին եւ Եկեղեցուն վերաբերեալ ճշմարտութիւնների համար զոհ է բերում: Դրանով է բացատրւում մեր սրբերի ու մարտիրոսների բազմութիւնը մեր եւ ընդհանուր քրիստոնէական Եկեղեցու մեծ հաւատի դարերում:

Թողնենք ուրեմն կէս բարեպաշտին յատուկ հրաշք տեսնելու տենչը եւ իզուր չկարծենք, թէ մեր ժամանակի շատ անտարբերներ ու կասկածամիտներ ճշմարիտ հաւատի կուգան եւ հաւատաւորներն էլ իրենց հաւատի մէջ կհաստատուին, եթէ մի զօրաւոր հրաշք տեղի ունենայ: Այլ փորձենք ճանաչել մեր հաւատոյ հերոսներին, որոնք ընդունակ են յուզելու մեր խիղճն ու կամքը եւ ծնելու մեր մէջ կենդանի հաւատ:

Չմոռանանք, որ Յիսուս երբեք հրաշք չի գործել մարդկանց մէջ հաւատ ծնելու, այլ նոցա կարիքն ու ցաւը դարմանելու նպատակով:

Ինչպէ՞ս վարուել:

Ինչպէս պատմուած է Յովնանի գրքի մէջ նինուէացոց մասին: Նինուէում լսւում է մարգարէի քարոզը, մարդիկ հաւատում են եւ ապաշխարում ու դառնում իրենց չար ճամբից: Աստուծոյ խօսքն ազդում է մարդոց խղճի եւ կամքի վերայ. ահա՛ հրաշք:

Հաւատո՞ւմ ենք մեր ժամանակում այս հրաշքին. վա՛յ մեզ, եթէ չենք հաւատում, որովհետեւ այս հրաշքն է, որ կամենում է տեսնել Աստուած, եւ այս հաւատն է, որ կամենում է Տէրը յուզել եւ տեսնել մեր մէջ:

Հրաշածին հաւատ. ա՛յս պիտի լինի ներկայ հաւատացեալներիս լոզունգը:

*1926 թ.*

---

# ՇԵՆՈՒԹԱ Գ — ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

*Սկիզբը՝ էջ 5*

*3. Տեր Հիսուսի «Ես Հոր մեջ եմ, եւ Հայրը՝ Իմ մեջ» (Հովհ. ԺԴ 10) խոսքը*

Նույն այս բառերը Նա կրկնում է նաեւ հաջորդ՝ 11-րդ համարում. «Հավատո՞ւմ եք Ինձ, որ Ես Հոր մեջ եմ, եւ Հայրը՝ Իմ մեջ. ապա թե ոչ՝ գոնե գործերի՛ համար հավատացեք Ինձ»: Նա նկատի ունի Իր կատարած այն գործերը, որոնք ապացուցում են Իր աստվածությունը, ինչպիսին են, օրինակ, արարման գործերը (Հովհ. Ա 3, Կող. Ա 16): Նա կրկնում է վերոհիշյալ արտահայտությունը նաեւ Հորն ուղղված Իր խոսքում. «Դու, Հայր, Իմ մեջ ես, եւ Ես՝ Քո» (Հովհ. ԺԷ 21): Հոր՝ Նրա մեջ լինելը նշանակում է, որ Աստվածությունն է Նրա մեջ, եւ Նրա մեջ Աստվածությունը մարդկության հետ է միացած: Սրա լավագույն բացատրությունը կարելի է գտնել Քրիստոսի մասին ս. Պողոս առաքյալի ասած հետեւյալ խոսքում. «Քանզի Նրա մեջ է բնակվում Աստվածության ամբողջ լրումը մարմնապես» (Կող. Բ 9):

Աստվածության ներբնակումը Տեր Քրիստոսի մեջ նման է արեւի մեջ՝ լույսի կամ ջերմության մեջ՝ կրակի կամ նույնիսկ մտքի մեջ խորհրդի բնակմանը, այնպես որ երկուսն էլ մեկ միավոր են դիտվում:

*4. Տեր Հիսուսը նկարագրում է նաեւ, թե որքան ամուր է Հոր հետ Իր հարաբերությունը:*

Նա ասում է. «Եվ այն ամենն, ինչ Իմն է, Քոնն է, եւ ինչը Քոնն է, այն Իմն է» (Հովհ. ԺԷ 10): Այսպիսի հայտարարություն չի կարող արվել մարդ էակի կողմից, որովհետեւ այն նշանակում է նրա եւ Հոր միջեւ լիակատար հավասարություն: Սա էր պատճառը, որ հրեաները կամենում էին Նրան քարկոծել. որովհետեւ Նա «Իրեն հավասար էր դարձնում Աստծուն» (Հովհ. Ե 18):

Այս առնչությամբ ս. Պողոս առաքյալն ասում է. «...ով Աստծո կերպարանքով էր, Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց» (Փիլիպ. Բ 6): Սա նշանակում է, որ Նա գործում էր իբրեւ Հորը հավասար մեկը՝ դա հափշտակություն չհամարելով, որովհետեւ դա էր իրականությունը:

Տերը նույն միտքը կրկնում է նաեւ Հովհ. ԺԶ 15-ում. «Այն ամենը, որ Հայրն ունի, Իմն է»:

*5. Տեր Հիսուսը հայտարարում է նաեւ, որ Ինքը Հոր գործերն է կատարում:*

Նա հրեաներին ասում է. «Եթե Իմ Հոր գործերը չեմ կատարում, մի՛ հավատացեք Ինձ: Իսկ եթե կատարում եմ, թեկուզ Ինձ չեք հավատում, սակայն գործերի՜ն հավատացեք, որպեսզի իմանաք եւ ճանաչեք, որ Հայրն Իմ մեջ է, եւ Ես՝ Հոր»: Ուստի «դարձյալ կամեցան բռնել Նրան» (Հովհ. Ժ 37-38, 39):

Այն փաստը, որ Տեր Հիսուսը կատարում է Հոր գործերը, ապացուցում է Նրա աստվածությունը: Դա էր պատճառը, որ հրեաները ցանկանում էին սպանել Նրան:

Երբ Տեր Հիսուսն ասաց. «Իմ Հայրը մինչեւ այժմ գործում է, Ես էլ եմ գործում» (Հովհ. Ե 17), հրեաները Նրա խոսքը համարեցին Հոր հետ հավասարության մի հայտարարություն: «Այդ պատճառով էլ հրեաներն է՛լ առավել էին կամենում սպանել Նրան» (Հովհ. Ե 18):

Նույն գլխում Տերն առավել հանգամանալից է բացատրում այս կետը: Նրա խոսքերից մեջբերում ենք հետեւյալը. «Որովհետեւ ինչպես Հայրն է մեռյալներին հարություն տալիս եւ կենդանացնում, այդպես էլ Որդին, ում կամենում է, կենդանացնում է» (Հովհ. Ե 21):

*6. Տերն ասում է նաեւ. «Որպեսզի ամենքը պատվեն Որդուն, ինչպես պատվում են Հորը» (Հովհ. Ե 22):*

Ոչ մի մարդ էակ չի համարձակվի նման խոսք ասել, քանի որ սա նշանակում է Հոր հետ համապատվություն: Ուստի սա էլ է ապացուցում Նրա աստվածությունը:

*7. Նա նաեւ ասում է. «Հավատացե՛ք Աստծուն եւ Ի՜նձ հավատացեք» (Հովհ. ԺԴ 1):*

Եթե մարդիկ պիտի հավատան Նրան, ինչպես հավատում են Հորը, ապա սա ապացույց է Հոր հետ Նրա հավասարության, հետեւաբար՝ նաեւ Նրա աստվածության:

*8. Նա ասում է. «Ով տեսավ Ինձ, տեսավ Հորը» (Հովհ. ԺԴ 9):*

Այս խոսքը կշտամբանք էր՝ ուղղված Փիլիպպոսին, ով ասաց. «Տե՛ր, ցո՛ւյց տուր մեզ Հորը, եւ բավական է մեզ»: Եվ Տերը պատասխանեց նրան. «Այսքան ժամանակ ձեզ հետ եմ, եւ չճանաչեցի՞ր Ինձ, Փիլիպպո՛ս. ով տեսավ Ինձ, տեսավ Հորը: Ուրեմն դու ինչպե՞ս ես ասում՝ ցո՛ւյց տուր մեզ Հորը» (Հովհ. ԺԴ 8-10):

Տերն Իր աշակերտներին նաեւ ասում է. «Եթե Ինձ իմանայիք, Իմ Հորն էլ կիմանայիք, եւ այսուհետեւ կիմանաք Նրան եւ տեսաք Նրան» (Հովհ. ԺԴ 7):

Իսկապե՛ս մենք տեսնում ենք Հորը հանձին Նրա Որդու, որովհետեւ Որդին Հոր փառքի լույսն ու Նրա էության պատկերն է (Եբր. Ա 3):

Սրա մասին է խոսում ս. Հովհաննես Ավետարանիչը, երբ ասում է. «Աստծուն ոչ ոք չի տեսել երբեք: Բայց Միածին Որդին, որ Հոր ծոցում է, Նա պատմեց» (Հովհ. Ա 18), այսինքն՝ մենք Աստծուն տեսանք Նրա Որդու անձի մեջ:

*9. Տեր Հիսուս Քրիստոսի եւ Հոր միջեւ եղած մի ուրիշ հարաբերություն եւս կա, որ ապացուցում է Քրիստոսի աստվածությունը. դա Հոր աջ կողմում Նրա նստելն է:*

*Շարունակելի*

*Թարգմանությունը"*
*Ս. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԻ*

---

# Աղամորդու կյանքը ծնունդից ի վեր ողորմության գործերով պտղավորվելու ապարեզ է

## Մեր հյուրն է Մայր Աթոռի Արխիվի տնօրեն արժանապատիվ Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը

*Սկիզբը՝ էջ 6*

**- Տե՛ր Ասողիկ, հնարավո՞ր է, որ մարդ, միայն ողորմության գործեր կատարելով, արժանանա Աստծու ողորմածությանը: Խոսքս վերաբերում է այն դեպքերին, երբ մարդը, մեղքի մեջ անզղջում մնալով, ողորմության գործեր է կատարում՝ հուսալով փրկության հասնել լոկ ողորմությամբ:**

- Նման մարդիկ, թեեւ էաբանորեն, բնությամբ կարողություն ունեն երբեմն-երբեմն բարիք գործելու իրենց մերձավորների համար, սակայն քանի որ իրենց կյանքի ընթացքում փեւապես քրիստոնեաբար չեն ապրում, չեն առաջնորդվում քրիստոնեական հավատքի սկզբունքներով, քրիստոնեությունը իբրեւ կենսակերպ իրենց կյանքում բացակայում է, ուստի եւ ողորմության դիպվածային գործերը երբեք ու երբեք չեն կարող իրենց համար փրկության առիթներ լինել: Մարդ միշտ պիտի հիշի Տիրոջ այն խոսքը, որ հայտնվում է Սուրբ Ավետարանով. «Եթե սեղանի վրա քո ընծան մատուցելու լինես եւ այնտեղ հիշես, թե քո եղբայրը քո դեմ մի ոխ ունի, քո ընծան թո՛ղ սեղանի առաջ եւ գնա՛ նախ հաշտվի՛ր քո եղբոր հետ եւ ապա եկ քո ընծան մատուցիր» (Մատթ. Ե 23-24): Դա նշանակում է, որ երբ մեկն ի սեր Աստծո կամ ի սեր ընկերոջ որեւէ ողորմության գործ է կատարում, սակայն մշտապես հոգեւոր կյանքով չի ապրում, կատարելության ձգտում չունի իր կյանքում, այս դեպքում որքան էլ ձգտի ողորմության գործեր գործել, ի վերջո, չի կարող դրանք ծառայեցնել իր անձի փրկությանը (այսպիսի մարդիկ իրենց պատահական ողորմությունները, մեծավ մասամբ, անում են ի ցույց ամենքի, որպեսզի փառավորվեն մարդկանցից): Նախ եւ առաջ հարկավոր է սեփական կյանքը կառուցել քրիստոնեական հավատքի սկզբունքների վրա, քրիստոնեական կենսակերպով ապրել երկրավոր կյանքի բոլոր օրերն անխտիր եւ ըստ այսմ անկեղծորեն, գիտակից կերպով կատարել առաքինության բոլոր գործերը: Ահա այդ ժամանակ է, որ մարդու կատարած յուրաքանչյուր գործ՝ լինի ողորմության թե որեւէ այլ առաքինության, իսկապես իր բուն նպատակին կծառայի եւ մարդու համար դեպի փրկություն տանող ճանապարհը կնախապատրաստի եւ դեպի Տերը տանող շավիղները կհարթի, քանի որ կատարյալ փրկությունն իրականանում է այն ժամանակ, երբ մենք անթերի պահում ենք այն բոլոր պատվիրաններն ու կարգերը, որոնք Սուրբ Եկեղեցու կյանքում աստվածադիր են եւ ավանդված սուրբ հարց կողմից՝ ի շինություն հոգեւոր շինվածքի եւ ի փրկություն մեր անձերի:



*Շարունակելի*

*Հյուրընկալեց*
*Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԴԿ

**հեռախոս՝**
**(0+31) 54510**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստոր. տպագր. 2.2.2005 թ.

**Տպաքանակը՝ 2500**
**Գինը՝ 50 դրամ**